Project: 101128630 — IMPROVET-AM — ERASMUS-EDU-2023-CB-VET

https://www.improvetam.eu/

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING

IMPROVET-AM

ՏԵՂԵԿԱՏՈՒ N 2

Project 101128630

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Project: 101128630 — IMPROVET-AM — ERASMUS-EDU-2023-CB-VET

Կարիերայի խորհրդատուների այցը Լիոն

Էրազմուս+ (Erasmus+) IMPROVET_AM ծրագրի շրջանակներում նախորդ տարի ամռանը «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի (ՍԵՊՖԱ)-ի և Գյումրու պետական բժշկական քոլեջի Կարիերայի կենտրոնի պատասխանատուներ Անուշ Ստեփանյանը և Կարինե Հակոբյանը այցելեցին Ֆրանսիայի Լիոն քաղաքում գտնվող «Ռոնի մասնագիտական կրթության ընկերություն» (ՍԵՊՌ) կամպուս: Այցի ընթացքում նրանք հնարավորություն ունեցան ծանոթանալու ՍԵՊՌ-ի գործունեությանը, մասնավորապես՝ Կարիերայի կենտրոնի աշխատանքներին, կատարելու մասնագիտական փոխանակումներ, ներկա գտնվելու տարեվերջյան երեկոյին, հանդիպելու շրջանավարտներին և գործատուներին, ինչպես նաև կատարելու մշակութային այցեր: Այցը կարևոր էր նաև մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանությունն ուսումնասիրելու, Կարիերայի խորհրդատուի ազգային և մարզային կենտրոններ այցի, շրջանավարտների ցանցի կառուցվածքն ուսումնասիրելու, ինչպես նաև ներառականություն ունեցող երեխաների հետ աշխատանքի հմտություններին ծանոթանալու առումով:

IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարիերայի խորհրդատուների այցը Լիոն

Տեղեկատվական միջոցառում. «Կարողությունների զարգացման ծրագրեր» Ապրո Ֆորմացիոնե-ում:

Հայաստանում մասնագիտական կողմնորոշման և աշխատանքի ծառայությունների Սեմինար. Մասնագիտական կողմնորոշման խորհրդատուներ

Ատամնատեխնիկական ծրագրի բարելավում.
Աշխատարան Հայաստանում

Լիոնի ՍԵՊՌ-ում միջազգային համագործակցության ամրապնդում մասնագիտական փոխանակումների և թրեյնինգների իրականացմամբ

Փորձի փոխանակում Ապրո Ֆորմացիոնե-ում

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Տեղեկատվական միջոցառում. «Կարողությունների զարգացման ծրագրեր» Ապրո Ֆորմացիոնե-ում:

2024 թվականի նոյեմբերի 5-ին Ալբայի Ապրո ֆորմացիոնե (APRO Formazione) ուսումնական կենտրոնում տեղի ունեցավ հատուկ երեկո: Ներկայացվեցին «Կարողությունների զարգացման» ծրագրերը, որոնցում ներգրավված է նաև Ապրո ֆորմացիոնե-ն: Ընդգծվեց, թե ինչպես համատեղ ջանքերը կարող են ստեղծել սիներգիա և զարգացնել նոր հնարավորություններ ու հմտություններ աշխարհի ոչ ԵՄ տարածքներում, մասնավորապես՝ Հայաստանում, Ալբանիայում, Կոսովոյում, Բոսնիա և Հերցեգովինայում, Մոնտենեգրոյում, Մարոկկոյում, Թունիսում, Կամերունում, Ռուանդայում, Նամիբեբիում:

Առողջապահությունը, կայուն զարգացումը, շարժունակությունը, միջազգայնացումը, շարունակական կրթությունը, սոցիալական ձեռներեցությունը, գաստրոնոմիան և զբոսաշրջությունը այն թեմատիկ ոլորտներն են, որոնց վրա աշխատում են Ապրո ֆորմացիոնե-ն ու նրա գործընկերները՝ տեղական կարիքներին արձագանքելու և երկարատև ազդեցություններ ստեղծելու համար: Միջոցառման առանցքային մասն էր կազմում Ապրո թիմի կողմից IMPROVET-AM նախագծի մանրամասն ներկայացումը տեսանյութերի, շնորհանդեսների, նկարների և զվարճալի պատ-մությունների միջոցով. ներկա էին նաև որոշ տեղական առողջապահական կառույցներ, որոնք համագործակցելու են Ապրո-ի հետ 2-րդ տարվա ընթացքում դասընթացավարների վերապատրաստման մոդուլները տրամադրելու հարցում (այսինքն՝ Cooperativa Emmaus):

Այնուհետև IMPROVET-AM-ի տարբերանշանով և մանրամասներով նյութեր բաժանվեցին հանդիսատեսին: Հանդիսատեսը հետաքրքրություն հայտնեց ծրագրի նորարարական մոտեցման համար, կարևորեց իտալական լավագույն փորձի և գիտելիքների փոխանակումը, որոնք կարող են մեծ ազդեցություն ունենալ սոցիալապես այնպիսի դժվար վիճակում գտնվող երկրներում, ինչպիսին է Հայաստանը:

Միջոցառումը տարածվել է Ապրո Ֆորմացիոնե սոցիալական ցանցի էջերի միջոցով, իսկ դրա մասին կարճ հոդված է հրապարակվել նույնիսկ տեղական La voce di Alba թերթում:

IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING

Հայաստանում մասնագիտական կողմնորոշման և աշխատանքի ծառայությունների Սեմինար

Մասնագիտական կողմնորոշման խորհրդատուներ

Դեկտեմբերի 11-ին ՍԵՊՖԱ-ն հյուրընկալեց Լիոնի ՍԵՊՌ կամպուսի, Ապրո Ֆորմացիոնեուսումնական կենտրոնի, ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՄՆ), ինչպես նաև ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) ներկայացուցիչներին՝ մասնագիտական կողմնորոշման ոլորտի կարևոր խնդիրները քննարկելու նպատակով: Միջոցառմանը մասնակցում էր նաև Գյումրու պետական բժշկական քոլեջը (ԳՊԲՔ):

Միջոցառումը բացեց ԿԳՄՄՆ տեղակալ Արաքսիա Սվաջյանը՝ կարևորելով մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈՒ) տրամադրող հաստատությունների ներգրավվածությունը Էրազմուս+ (Erasmus+) ծրագրերում: Ֆրանսիայի Օվեռն-Ռոն-Ալպ և Իտալիայի Պիեմոնտ շրջանների ներկայացուցիչները միացան առցանց՝ կիսվելով իրենց փորձով մասնագիտական կողմնորոշման ծառայությունների ոլորտում:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 12-ին, քննարկումները շարունակվեցին ՍԵՊՖԱ-ում, որտեղ եվրոպացի գործընկերները ներկայացրին նորարարական առցանց գործիքներ և լավագույն փորձի օրինակներ: Այս նախաձեռնությունը համագործակցային ծրագրի մաս է, որը ներառում է ՍԵՊՌ կամպուսը, Ապրո Ֆորմացիոնե ուսումնական կենտրոնը, «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամը, Գյումրու պետական բժշկական քոլեջը և Հովակիմյան լաբ ատամնատեխնիկական լաբորատորիան:

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Ատամնատեխնիկական ծրագրի բարելավում. Աշխատարան Հայաստանում

Էրազմուս+ IMPROVET_AM նախագծի շրջանակում ՍԵՊՖԱ-ի Ֆրանսիական ՍԵՊՌ կամպուսի, Գյումրու պետական բժշկական քոլեջի Ատամնատեխնիկական գործ մասնագիտության դասավանդողները և Հովակիմյան լաբ ատամնատեխնիկական լաբորատորիայի տնօրեն Սարգիս Հովակիմյանը ունեցան հագեցած մասնագիտական հանդիպումներ: Այս հանդիպումների ընթացքում ֆրանսիացի գործընկեր, ՍԵՊՌ-ի Ատամնատեխնիկական գործ մասնագիտության ուսումնական հարցերով պատասխանատու Անն Լոր Գրիյեի հետ քննարկվեցին Ատամնատեխնիկական գործ մասնագիտության կրթական ծրագրերի բենչմարքինգի արդյունքները, որոնք ուղղված են կրթական ծրագրի բարելավմանը, աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին և միջազգային չափանիշներին համապատասխանության ապահովմանը: Մանավորապես, առաջարկվեց հատուկ մասնագիտական մոդուլների բովանդակությունից ելնելով՝ կատարել ժամային վերաբաշխում, որի արդյունքում գոյացած ազատ ժամաքանակը կտրամադրվի ատամնատեխնիկական թվային հմտությունների ձևավորմանը: Հանդիպումների ընթացքում անդրադարձ կատարվեց նաև ատամնատեխնիկների համար նախատեսված լրացուցիչ կրթական ծրագրի մշակմանը, նախանշվեցին առաջիկա անելիքները:

IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING

Լիոնի ՍԵՊՌ-ում միջազգային համագործակցության ամրապնդում մասնագիտական փոխանակումների և թրեյնինգների իրականացմամբ

IMPROVET ծրագրի շրջանակներում հունվարի 27-31-ը Լիոնի ՍԵՊՌ կամպուսը մեծ ուրախությամբ ընդունեց հայկական պատվիրակությանը: Այս նախաձեռնությունը նպատակ ուներ հարստացնելու հայկական մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ ՍԵՊՖԱ-ի և Գյումրու պետական բժշկական քոլեջի հմտություններն ու փորձը: Պատվիրակությունը կազմված էր երկու կրթական հաստատությունների տնօրեններից, Ատամնատեխնիկական գործ մասնագիտության չորս դասընթացավարներից և չորս ուսանողներից, որոնք մասնակցեցին մասնագիտական փոխանակման ինտենսիվ գործունեությանը: Ողջ շաբաթվա ընթացքում այցի անդամները մասնակցել են մասնագիտական փոխանակման աշխատանքների, թրեյնինգների և ճանաչողական այցերի՝ ձեռք բերելով ատամնատեխնիկական տեխնոլոգիաների առաջադեմ փորձը: Նրանք այցելեցին երկու առաջատար ատամնատեխնիկական լաբորատորիաներ՝ ARTDENTECK և Laboratoire Abbou, որտեղ ծանոթացան թվային սարքավորումներին և բարձրորակ նյութերի կիրառմանը: Դասընթացավարները և ուսանողները նաև մասնակցել են մասնագիտական թվային EXOCAD & 3DShape ծրագրերի սեմինարներին, CAD/CAM սարքավորման միջոցով ցիրկոնե պսակների պատրաստմանը, կերամիկական պսակների ձևավորմանը: Միևնույն ժամանակ, հաստատությունների ղեկավարները մասնակցել են թվայնացման, նորարարական մանկավարժության, ձեռներեցության, առողջության, անվտանգության և շրջակա միջավայրի, ներառականության, գենդերային հավասարության, ներգրավվածության, միջազգայնացման ռազմավարության և աշխատանքի վրա հիմնված ուսուցման թեմատիկ նիստերին: Այս քննարկումները նպաստեցին ՍԵՊՌ-ում մասնագիտական վերապատրաստումներին ուղղված ժամանակակից մոտեցումների զարգացմանը և բարելավմանը:

Փոխանակման ծրագրի արդյունքում ոչ միայն ընդլայնվեցին մասնագիտական գիտելիքները, այլև ամրապնդվեց հաստատությունների միջև միջազգային համագործակցությունը: Մենք անհամբեր սպասում ենք այս համագործակցության հետագա զարգացմանը և IMPROVET նախագծի ոգեշնչող ճանապարհորդության շարունակմանը:

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Փորձի փոխանակում Ապրո Ֆորմացիոնե-ում

2025 թվականի հունվարի 27-31 Erasmus+ IMPROVET_AM ծրագիրը Իտալիայի Ալբա քաղաքում համախմբեց առողջապահության ոլորտի մասնագետներին հնգօրյա հանդիպումների շարքում, որը նպատակ ուներ խթանել միջազգային համագործակցությունն ու մասնագիտաան զարգացումը: Գյումրու պետական բժշկական քոլեջի և ՍԵՊՖԱ-ի դասախոսները ակտիվորեն մասնակցեցին ծրագրին, որի շրջանակում անցկացվեցին քննարկումներ, գործնական սեմինարներ և փորձի փոխանակման ձևաչափեր:

Առաջին օրը նվիրված էր հաշմանդամություն ունեցող անձանց աջակցությանը Casa Maria Rosa համայնքի մասնագետները ներկայացրին խնամքի անհատական մոտեցումներ, իսկ մասնակիցներն ընդգրկվեցին գործնական առաջադրանքներում և ուսումնասիրություններում՝ դիտարկելով լավագույն փորձը:

Երկրորդ օրը ներառում էր այցելություն Ապրո ֆորմացիոնե-ի առողջապահական լաբորատորիա, որտեղ ցուցադրվեցին առաջադեմ տեխնոլոգիաներ, ինչպես նաև անցկացվեց աշխատարան՝ նվիրված առողջապահական ոլորտի ուսանողների համար կայունության և մասնագիտական կողմնորոշման ռազմավարություններին:

Երրորդ օրը մասնակիցները հանդիպեցին Պիեմոնտի շրջանի ղեկավար Թերեզա Վալենտինոյի հետ՝ ծանոթանալու Իտալիայի ՄԿՈՒ համակարգին: Առողջապահական ոլորտի փորձագետ Դավիդ Տեդեսկոն հանդես եկավ զեկույցով՝ նվիրված սթրեսի և մասնագիտական հյուծվածության (burnout) խնդրին, իսկ Cottolengo առողջապահական կենտրոնի շրջայցը մասնակիցներին տրամադրեց իրական միջավայրում դեպքերին ծանոթանալու հնարավորություն:

Չորրորդ օրը Հայաստանի գործընկերները ճանաչողական այց կատարեցին Ալբայի UPO համալսարանի քույրական ուսումնական կենտրոն, որտեղ ցուցադրվեցին նորարարական սիմուլյացիոն լաբորատորիաներ և բժշկական արտակարգ իրավիճակների ուսուցման նոր ծրագրային ապահովում:

Progetto Emmaus-ի մասնագետ Դոմենիկո Մասանոն և գործընկեր ուսուցիչ Ջուլիո Ռոնկոն ներկայացրին մարդու իրավունքների պաշտպանության մոտեցումը առողջապահության ոլորտում:

Հինգերորդ օրը նվիրված էր նոր կրթական մոդուլի ձևավորմանը և ապագա քայլերի պլանավորմանը: Առողջապահական ծրագրերի պատասխանատու Էմանուելա Իակոնոն ներկայացրեց ուսուցման մեթոդները, խոսեց գրանցման գործընթացի և ուղեցույցների մասին, ինչպես նաև անդրադարձավ ուսուցման արդյունքների գնահատման հարցերին, այդ թվում՝ վերջնական աշխատանքի: Այս ծրագիրը ոչ միայն ամրապնդեց միջազգային կապերը, այլև մասնակիցներին զինեց գործնական գիտելիքներով և հմտություններով՝ առողջապահական կրթությունն ու ծառայությունները իրենց տարածաշրջաններում բարելավելու համար:

Project: 101128630 — IMPROVET-AM — ERASMUS-EDU-2023-CB-VET

Այլ աղբյուրներում **IMPROVET_AM**-ի մասին

Armenian community in Rome

Gazzetta d'Alba

Gazzetta d’Alba faceboolk page

Radio Armenie: Radio Bridge Projects

Միացեք մեր գործընկերների թիմին

Ուրախ ենք ընդունել այն անհատներին և կազմակերպություններին, ովքեր կիսում են մեր տեսլականը՝ դառնալու IMPROVET-AM ծրագրի մաս: Միասին կարող ենք կատարել դրական փոփոխություններ և ստեղծել փայլուն ապագա Հայաստանի մասնագիտական կրթության համար:

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար: